ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 մարտի 2024 թվականի N 327 - Ա

ԳՈՒՅՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 247-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի անունով ներմուծված, ապա «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով 2023 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 05100020/040923/0048198 ապրանքների հայտարարագրերով ձևակերպված թվով 22 տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք) օրենքով սահմանված կարգով անհատույց փոխանցել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող գույքն ամրացնել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 45 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ